

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ»-ի ԹՈՒՂԹԸ անցեալ № 5-ից սկսած ալ ևս առաջւանը չէ: Այժմեալ Թուղթը աւելի սպիտակ է, աւելի փայլունի և աւելի թանկագին է:

«ՄՈՒՐՃ»-ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ: Ներկայ համարում տպւում է սոյն 1890 թւականի «Մուրճ»-ի առաջին կիսամեակի (№№ 1—6) բովանդակութիւնը:

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՑ շատերը մեզ շարունակ դիմում են խնդրքով, որ մեր ամսագիրը հրատարակւի ամեն ամսի սկզբին, որպէս առաջ էր և ոչ ամեն ամսի վերջը:

Կրկին վերադառնալու համար մեր սկզբնական սովորութեան, մենք վճռեցինք չուլիս և օգոստոս ամիսների համարները, իբր բացառութիւն, մի և նոյն օրը հրատարակել: Այսպիսով հետեալ № 7 և 8 համարները միացրած լուս կը տեսնին օգոստոսի սկզբներին: Այսպիսով մենք կարող ենք, ժամանակ վաստակելով, սեպտեմբերի համարը դուրս բերել ալի ամսի սկզբին և հետեալ ամիսներին՝ նոյն կարգով:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ Ս. ՄԵՍՐՈՎՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ, կից բացւած Գրադարան-Ընթերցարանի վարչութիւնը, ալի հիմնարկութեան տասնամեակը տօնելու առիթով դիմում է «Մուրճ»-ի խմբագրութեան, խնդրելով չափաւարել, որ Գրադարան-Ընթերցարանը կարօտ է նւէրների թէ՛ դրամով և թէ՛ գրքերով: Ուստի ցանկացողները դրամ կամ գրքեր նւիրելու թող բարեհաճեն դիմել ալս հասցէով՝ Въ г. Ахалкалаки, Предсѣдателью Совѣта Членовъ-Основателей Читальни при Армянскомъ Училищѣ, А. Минасянцу.

Պր. ՍԵՂՐԱՎ ՄԱՆԴԻՆԻԱՆ «Արարատ» ամսագրի 6-դ համարում տպւած լօղւածը քերականութեան լուծման մասին վերջացնում է մի քանի խօսքերով «Մուրճ»-ի հասցէին:

Ինչ է ասում պ. Մանգլինեանը: Գանգատւելով հայոց լեզուի արդի վիճակի մասին, ուր իբր թէ ալժամ ոչ սկզբունք

կալ և ոչ կանոն և պնդելով, թէ մեզանում «հրապարակախօսութիւնը, այն մեծ ուժը, աղախին է դարձել (ինչու ոչ ծառայ) մեր պարզամտութեան», նա մի օրինակ է ուզում բերել և բերում է հետեւալը:

«Փ. Վարդանեանը թարգմանել է Նիլլերի «Աւագակները»: Մի գրախօս թարգմանութեան մի քանի կտորներ առաջ բերելով և թարգմանութիւնը թերի «ամարելով» ինքն էլ իւր կողմից նոր թարգմանութիւն է անում—անկատարը կատարելագործելու մտօք: Բայց ով զարմանալի թիւրիմացութիւն... մենք կարող էինք նմանութեամբ խօսել, թէ լուսինը արեգակի գէմ են բերել և ուզում են հաւատացնել մեզ, թէ այն է իսկական արեգակը: Խնդիրը այսպէս անձնական ճաշակի և վերջին ծարապողութեան հասնելով բանական հիմունքներ իշխանութիւնը գտնացնում է»...

Բայց այդ այդպէս է արդեօք:

«Մուրճ»-ի գրախօսներից մէկը, Ա. Ա., համեմատելով պ. Վարդանեանցի թարգմանութիւնը գերմաներէն բնագրի հետ, գտել էր որ «պ. Փիլ. Վարդանեանը շատ թէ քիչ ազատ կերպով է վարում «Աւագակներ» բնագրի հետ» (Մուրճ, № 3, եր. 429, առաջին սիւնեակ):

Իրաւունք ունի մի գրախօս. այդպիսի նկատողութիւն անելու, թէ ոչ:

Պատասխան՝ այո՛, այդպիսի նկատողութիւն գրախօսի պարտականութիւնների շրջանակից դուրս չէ և նա լաւ է արել, եթէ միայն նկատողութիւնը անհիմն չէ:

Բայց ինչպէս կարող էր գրախօսը իւր հաւ ընթերցողներին ցոյց տալ, թէ որչափով չեղում են թարգմանչի խօսքերը՝ գերմանացի հեղինակի խօսքերից:

Պատասխան՝ այդ կարող էր անել նա, եթէ կարելի չէր չափ ճշգրիտ հաւերէն թարգմանութեան լանդէպ դնէր պ. Վարդանեանցի թարմանութիւնը.

Այդպէս էլ արել էր «Մուրճ»-ի գրախօսը. նա, օրինակ, գտել էր, որ Նիլլերը ասում է հետեւալը՝

Յորանց, Հենց որ դուք այլ ևս նորան չը սիրեցիք, այդ հրէշը այլ ևս ձեր որդին չէ, թէկուզ նա ձեր մտից կը տրւած լինի:

Իսկ պ. Վարդանեանց «շատ թէ քիչ ազատ կերպով վարւելով բնագրի հետ», այդ տողերը թարգմանում է այդպէս:

«Եթէ այլ ևս չէք սիրում նորան, ասել է թէ այդ

պոռնը կորդին ալ ևս ձեր զաւակը չէ, թէն ձեր մօից կազմւած լինէր:

Մուրճ-ի զրախօսը գտել էր, որ ալստեղ պոռնը կորդին խօսքը Շիլլերի «Abart» խօսքի տեղը չի բռնում և գտել էր, որ իզուր է պ. Վարդանեանցը Շիլլերի (և ոչ զրախօսի) «մօից կտրւած» խօսքը թարգմանել՝ «մօից կազմւած», քանի որ առաջինը նոյնքան և դեռ աւելի սիրուն հաւերէն է, քան երկրորդը:

Աջպիսի պարզ բանի դիմաց ինչ է ասում պ. Մանդինեանը, նա ասում է թէ՝ «մօից կազմւած» խօսքը—արեգակ է, իսկ «մօից կտրւած» խօսքը—լուսին. նա ասում է, թէ՝ «պոռնը-կորդի» խօսքը, իբր թարգմանութիւն Abart խօսքի, արեգակ է, իսկ «հրէշ» խօսքը—լուսին:

Շիլլերը ասում է՝

Ծերունի Մօօր, Անքնքուշ զաւակ... իսկ Վարդանեանը «չատ թէ քիչ աղատ կերպով վարւելով բնագրի հետ», թարգմանում է՝

«Անպզուշ զաւակ»:

Եւ պ. Մանդինեանցը իւր ոչ կոպիտ, այլ «ձեմարանական ճաշակով» հարկ է համարում իւր աշակերտներին լալտարարել թէ Վարդանեանի խօսքերը արեգակնալին են, իսկ Շիլլերի խօսքերը—լուսնեակալին...: Եւ նա մեր աչդ նկատողութիւնները համարում է «անձնական ճաշակի» խնդիր:

Պր. Մանդինեանը կարծես զարմանում է, որ «Մուրճ»-ի զրախօսը միայն մի քանի օրինակներ է բերել իւր ասածը ապացուցելու համար, բոլորովին մոռանալով, որ զրախօսը չի էլ ուղեցել որոնել ամենակտրուկ ապացույցները, այլ ուղղակի ոկսել է սկզբից, «Աւազակներին» հենց առաջին երեսներից և ալն էլ՝ առաջին տողերից և բերելով միայն մի հատ օրինակ՝ գրքի միջերեքից: Եւ աչդ մի քանի օրինակները, ալնումե-նալին դիպէք թւով որքան են: Մօտ քսան, Հասկացէք, ուրեմն, թէ որքան օրինակներ է պահանջում մեզից պ. Մանդինեանը միմիայն ալս ապացուցելու համար, որ պ. Փ. Վարդանեանը «չատ թէ քիչ աղատ կերպով է վերաբերւել Աւազակների բնագրի հետ»: Եւ ցաւը ալս է, որ մենք չենք հաւատում, թէ պր. Մանդինեանը ուղեցած լինի իւր պահանջներով մեզ աւելի պարտաճանաչ դարձնել, որովհետեւ անկարելի ենք համարում մի զրախօսից պահանջել, որ նա մի նկատողութիւն ապացուցելու համար քսանից աւելի օրինակներ բերելու պարտաւորւած լինի: Եւ ինչ օգուտ պ. Մանդինեանցի նման մտա-

ծողներին համար աւելի օրինակներ, քանի որ նոքա պէտք է շարունակեն ունենալ արեգակի և լուսնի մասին այն գաղափարը, որ տեսանք վերև և քանի որ ամենաթեթև նկատողութիւնն անգամ մի թէկուզ շատ և շատ չարգլած թարգմանչի նկատմամբ նոքա պէտք է համարեն քրէական չանցանք ընդդէմ հեղինակութեան:

Եւ տեսէք դեռ թէ ինչ ժանօթութիւն է անում պ. Մանդինեան, վերջակէտ դնելով իւր անաջող ВѢДѢՆՆՈՒՄ-ին «Մուրճ»-ի գրախօսի դէմ:

«Հասկանալի է, որ այստեղ (այսինքն՝ իւր գրած չօղւածում քերականական լուծման մասին) մենք կարող էինք գրախօսի միայն մի մասնաւոր խնդրի վերաբառնացոյց անել, և թէ ինչու չ'ուզեցանք արեգակի (այսինքն պ. Փ. Վարդանեանցի «Աւազակներին») մէջ բծեր ևս փնտռել:

Թողենք այն, որ պ. Մանդինեանցի՝ այս վերջին նախադասութիւնը չի կարող ենթարկուել որ և է մարդկային լեզուի քերականական լուծման, թողենք այդ, ասում ենք մենք, Բայց արգեօք ինչ բծեր են, որ պ. Մանդինեանցը լուծեան կը տար, եթէ նա լինէր մի ամաագրի գրախօս, որի ուղղակի պարտականութիւնն է մի գիրք թէ իւր ամբողջութեամբ գնահատել և թէ մասնաւոր արժանաւորութիւնները և թերութիւնները ցոյց տալ:

Մենք իսկապէս ցաւում ենք, որ «Մուրճ»-ի գրախօսի փորձը՝ մի թարգմանութեան անհարազատութիւնը մի քանի օրինակներով ցոյց տալ, կարող էր պ. Մանդինեանցին թելադրել այսպիսի տողեր՝

«Ճաշակի այսքան կուտութիւնը առանց անդրադարձութեան չի անցնում մեր դպրոցներից, ուստի և մեր ուսուցիչները պէտք է լինին արթուն, արթուն և դարձեալ արթուն... աշակերտները լաւ չեն խօսում, լաւ չեն գրում, լաւ չեն մտածում, իսկ գրականութիւնը դեռ դարձեալ համբանների ձեռքի մէջն է մնում»:

Այս տողերի առիթով մենք որ և է վէճի մէջ մտնել չենք կամենում:

ՀԱՅՐ ԴԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՑ, ի պատասխանի «Մուրճ»-ի խմբագրից ուղարկած չօրեւանական շնորհաւորութեան հեռագրի, ստաղանք շնորհակալութեան նամակ ամաագրիս խմբագրի անուանով:

Հայր Ալիշանից ստացանք նաև մի տպւած դրութիւն «Առբարեմաղորդս փսնամեալ չօրելինիս ողջուն և շնորհակալութիւն» երկու ոտանաւորներով, մէկը՝ գրած իւր քահանայագործու-

թիւան նախընթաց օրը (6 չունիսի 1840), միւսը գրւած առաջին անգամ սլաւաարադելուց առաջ (9 չունիսի 1840)։ առաջինն է «Առ հոգին սուրբ ի հսկմանս օծմանս ի քահանայութիւն»։ և երկրորդը՝ «Առ խաչելեալն Յիսուս»։

Այդ թերթերից մի-երկու տասնեակ ստացած լինելով, ներկայ համարի հետ ուղարկում ենք այլ և այլ քաղաքների մեր բաժանորդներից մէկին կամ միւսին։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ. Ներկայ չունիս ամսի 1-ին վախճանեց Աբասթումանում Հմայեակ Սողոմանեանց 30 տարի անց հասակում։ Հանգուցեալը մէկն էր մեր նոր սերնդի ամենահազադիւտ տիպերից, իւր հաստատուն, նպատակին գիտակ և միևնոյն ժամանակ վերին աստիճանի համեստ և շիտակ բնաւորութիւնով։ Նորա իղէալն էր՝ դիւղատնտեսական մի դաստակերտ հիմնել կովկասում, մի իղէալ, որ նա պէտք է նորերումս իրագործէր։ Միմիայն մօտիկ ծանօթներին չալտնի է, թէ ինչ զարմանալի վիճակների էր ենթարկել իրան հանգուցեալը՝ Խուսիսալում և Ֆրանսիալում ձեռք բերելու իւր նպատակին հասնելու համար անհրաժեշտ տեղեկութիւնները և գործնական փորձը։ Իւր ալդ ինքն ըստ ինքեան հասարակ գործի մէջ նա մտցնում էր մի իղէալականութիւն, որի պատճառով հանգուցեալը մի հազադիւտ, բայց և ուրախալի երևոյթ էր ներկայացնում իւր բոլոր ծանօթների շրջաններում, որոնց նա ներշնչում էր մի տեսակ պատկառանք ղէպի իւր անձը։ Նա կարող էր տանել միայն բարոյական մթնոլորտը, ատելով ամեն խարդախութիւն և կեղծիք։

Նորա մի լողածը «Արդիւնահանդիսից» մրցեր չորացնելու մասին, ուր նա ալս միտքն է արծարծում, թէ կովկասցիներին պէտք է դուրս գալ տնային ալգեղործութիւնից անց կենալու համար ղէպի դաշտալին, այսինքն ընդարձակ ալգեղործութիւնը—տպւեց «Մուրճ»-ում 1889, № 11։ Հանգուցեալի արծարծած ալդ միտքը, որը մենք բեղմնաւոր ենք գտնում, կարծում ենք թէ մօտ ապագայում մեծ կարեւորութիւն է սաանալու։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՑ նրանց, որոնք «Մուրճ»-ի բաժանորդագինը դեռ ևս չեն վճարած, խնդրում ենք շտապել ալն շուտով հասցնել խմբագրութեանս։ Յալտնում ենք միաժամանակ, որ հասցէների փոփոխութեան համար պէտք է վճարել 28 կոպ., որ կարելի է ուղարկել մարկաներով։

ՏԱԼՄՈՒԴԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ «ՄՈՒԻՃ»-ի ՄԱՍԻՆ. «Նոր-Դար» լրագիրը իւր 75—76—77—78 համարներում փորձ փորձեց մի քննադատութիւն տալ «Մուրճ»-ի մինչ սոլն տարւալ ապրիլ

ամիսը լուս տեսած 16 համարների մասին: Քննադատութեան տակ գցել այդ շարք լողածները մենք մտադիր չենք, բայց մեր մշտական ընթերցողներին պարտք ենք համարում հաղորդել մեր տպաւորութիւնը այդ քննադատութեան մասին: 16 ամիս շարունակ այդ լրագիրը ինտրիգալիւ լուրեր և րբենմանակ լողածներ հրատարակելով «Մուրճ»-ի մասին, նա ուղեցել է իւր գործը այդ խնդրի առիթով պսակել մի ընդարձակ լողածով, որի ոգին չէր կարող տարբեր լինել այն ոգուց, որը իշխում է այդ թերթի խմբագրատան մէջ: Թերևս ուղեմալով լինել անկողնապահ և օրեկտիւ, կրիտիկոսը մոռացել է, որ միայն հաւատացնելը բաւական չէ, որ հաւատան, և որ գլխաւորն է, անհառութիւնը ղեռ ևս բաւական չէ մի քննադատութեան համար, այլ հարկաւոր է անհաւու ոգու հետ միացնել և ոգեկան ու մտաւոր կարողութիւն՝ քննադատած առարկան իւր ամբողջութեամբ ըմբռնելու համար: Պէտք է լինել արդէն դրականապէս անհամ և անտաղանդ, Արասիա-նեանցի քննադատական հալեացքը կռուների և նորանից սերլածների մասին բացատրել նորանով, որ «Նոր-Գար»-ը քարձակեց «Մուրճ»-ի ուղղագրութեան վերաբեր... Ձը գիտենք ինչ իողի ենթադրենք «Նոր-Գար»-ի մէջ, որը Սարգսեանցի «Ալցի» նշանակութիւնը ուղում է չափել այն օրերի թւով, որ հեղինակը անց է կացրել թիւրքաց Հայաստանում, էլ չը խօսած այն թիւամիտակնարկութեան մասին, որ անում է «Ալցի» տեսչեն-ցիալի վերաբերմամբ:

Մի մարդ, որը «Մուրճ»-ի քաղաքական բաժնի բոլոր նշանակութիւնը չափում է այդ բաժնի լողածների մէջ պարունակած քաղաքական լուրերի թւով կամ նորանով, թէ որքան այդ լուրերը նոր են հալ ընթերցողների համար... Դա՛ քննադատական մեծ թիւմութեան մի նմուշ է, քանի որ չը կալ աշխարհքիս ևրեսին մի հատ ամսագիր, որի քաղաքական բաժնի նպատակը լինէր լրագիր կարդացողներին նոր լուրեր հաղորդել—Աւելցրէք այդ բոլորի վերալ այն, որ հալկական երիտասարդական չրջանների կեանքից վերցրած տիպեր ներկայացնող համալսանի ուրազիծները կաաարնալ ինտրիգալի մէջ են գցում «Նոր-Գար»-ի հրապարակախօսներին. աւելցրէք այն, որ պ. Գր. Վարդանեանցի լողածները գիւղական վարկի մասին «Նոր-Գար»-ի համար «խսկապէս ուսումնասիրութիւններ չեն», թէ և հեղինակը ինքը ոչ մի անունով չի կամեցել կնքել իւր լողածները, ալ ուղեցել է խնդրի մասին ամիտի լողածներ տալ, դուցէ լողածներ, որոնք իրանց բովանդակութիւնով և ամիտութիւնով չատ բան աւելի են տալիս,

քան ինչ կալ գրւած ալդ նիւթի մասին մեր զրականութեան մէջ։ Մի մարդ, որը «Մուրճ»-ի գրախօսական բաժնի ժողովրդականութիւնը ուղղում է նսեմացնել, լալանելով թէ դա՛ քննադատութիւն չէ, հետեւելով երկիւղալի պատճառաբանութեան, թէ՛ խնձորը տանձ չէ, տանձը դեղձ չէ, դեղձը խաղող չէ, ուրեմն ոչ խնձորը, ոչ տանձը և ոչ դեղձը լաւ պտուղներ են. մի մարդ, որը դտնելով հանդերձ, որ «Մուրճ»-ի բանաստեղծութիւնները մէջ «կան և շատ սեղեցիկները» և այն էլ մանաւանդ (ուրեմն կան և ուրիշներ) այն մեր բանաստեղծ-աշխատակիցների (Ղ. Մանէշեանցի և Ալ Արծիւեանի) գրւածքների մէջ; որոնք «Մուրճ»-ում առաջնակարգ տեղն են բռնել և որոնց գրւածքները կազմում են մեծագոյն մասը «Մուրճ»-ում տպւած ոտանաւորների, չը նաչած որ դեռ անլատ զրոյներ էին դոքա,—աչնուամենայնիւ սրամտութիւն թէ քաջութիւն է համարում «Մուրճ»-ի ոտանաւորները օրինակ բերել ցոյց տալու համար թէ մենք լաւն ու վատը ջոկել չը դիտենք, թէ «կարծես «Մուրճ»-ի խմբադրութեան մէջ քննադատութեան բացակայութիւն է»։

Մի կրիտիկոս, որը մեր ներքին Տեսութիւնը գտնում է «բաւական աջողութեամբ կազմւած», և կարծես աժդոհ ալդ վկայութիւնից, ձեռաց բանակուի մէջ է մտնում մեղ հետ ապահարդանի խնդրի առիթով եայլն և այլն—ահա, ասում ենք, մի ալդպիսի աշխարհահեցողութեան տէր խմբադրութիւն ձեռնարկել է քննադատել «Մուրճ»-ի ուղղութիւնը, որոշել նորա դիրքը մեր մամուլի մէջ և դնահատել միւր հրապարակախօսութիւնը առհասարակ և մեր տւած լօղածների արժէքը մասնաւորապէս։ Հասկանալի է թէ «Նոր-Դար»-ի ալդ լօղածները որքան ուսանելի կարող են լինել մեզ համար։ Անտաղանդութիւն՝ միացրած մի լալտնի չափով տալ-մուղական ոգու հետ՝ ահա ընդհանուր տպաւորութիւնը, որ թողնում է մեղ վերալ ալս առաջին քննադատութիւնը «Մուրճ»-ի մասին։

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳՆԴԱՊԵՏ ԱԼԷԿՍԱՆԴՐ ՄԵԼԻԳ-ՀԱՅԱՋՆԵԱՆԻ հրատարակած գրքերի շարքում, բացի անցեալ անգամ լիշատակածներից, պէտք է դնել նաև հետեւեալները, որ ուղարկել է մեղ պ. Միքայէլ Մելիք-Հակազեանց, իւր հանգուցեալ եղբոր չանձնարարութեամբ՝ Լեբեգև Դ. Վ. և Մաքսիմով, Վ. Վ.—Ձիւտրի առողջութեան խնամատարութիւնը, ձեռնարկ ուսումնական զօրաբաժնի, ենթ-սպանների և բոլոր ստորակարգ զինւորների համար։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1888.

Սականինի, Ա. Գուստաւ.—Ձինական եղինճի մշակութիւնը, Թիֆլ. 1888, տպ. Վարդանեանի.

Ռէլի, դոքտոր.—Ձինորենբի ամենասովորական աշխատանքաւ ճորանից հետու մնալու միջոցները, Թիֆլ., տպ. Մ Վարդանեանի, 1888.

Համառօտ Աղօթագիրք. Ձրի բաժանելի. Թիֆլիս, 1888. տպ. Մ. Վարդանեանի.

Բուլղակովսկի, Դիմիտրի քահանայ.—Անձնէք հպատակութիւն թողաւորին և հալոնիքին, հրաժեշտի խօսք ճորենտի դուսական զինւորին, Թիֆլ. տպ. Մ. Վարդանեանի, 1888.

Տօմիլին, պօղպօլկովսկի.—Երդմնական խոստումն (երդումն), բացառուած ստորին զինւորենբի համար. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1888.

Հեղինէ վեփը, Անցեալ № 5-ում քիշատակած «Նինա» վէպը սկսում է ալժմանից ապագրել «Հեղինէ» անունով:

ՎրիՊԱԿՆԵՐ, «Մուրճ», № 5-ում սպրդել են հետեալ սխալները:

Առաջնորդող չօղածում, երես 647, տող 8 և 9 վերևից տպւած է... «ալստեղ կալ հասարակութեան ապագայ խնդիր», մինչդեռ պէտք է լինի... «ալստեղ կալ հասարակութեան ապագայի խնդիր»:

Ամալալ Գրօնիկում, երես 759, տող 5-րորդ վերևից, փակագծի մէջ պէտք է լինի 3000 ր. և ոչ 300 ր.: Նոյն երես, տող 8-րորդ ներքևից, փոխանակ «նահանգներին», պէտք է լինի «հանդամանքներին»:

Երես 760, «բուժական — մանկավարժական դպրոց Ենալումի պ. Բարխուդարեանցի չօղածի մէջ տպւած «պրօֆեսօր Թալն» ամեն տեղ պէտք է կարդալ «պրօֆեսօր Ռալն»: Նոյն երեսում տպւած է «Heiepaedagogische Anstalt», իսկ պէտք է լինէր «Heilpaedagogische Anstalt»: